

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր

Հ Ր Ա Մ Ա Ն

N998 - Լ

19. 08. 2019թ.

ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

2018 ԹՎԱԿԱՆԻ ԳԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N1552-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2018թ. դեկտեմբերի 17-ի «ՀՀ զինված ուժերում պայմանագրային զինվորական ծառայությունից արձակելու և զինվորական ծառայությունից արձակված զինծառայողներին զինվորական համազգեստ կրելու իրավունք վերապահելու կարգերը սահմանելու, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարի 2002թ. հոկտեմբերի 31-ի N893 հրամանում լրացումներ կատարելու մասին» N1552-Լ հրամանում կատարել հետևյալ լրացումները.

1) հավելված 1-ի 2-րդ կետի 3-րդ ենթակետում «վերաբերյալ» բառից հետո լրացնել «կամ զինծառայողին զինվորական ծառայությունից արձակելու իրավասություն ունեցող պետի ենթակա կադրային մարմնի կողմից տրված եզրակացությունը (ձև 22)՝ զինծառայողի զինվորական հաշվառման մասնագիտությանը, ծառայողական գործունեության փորձին, առողջական վիճակին համապատասխան առկա թափուր այլ զինվորական պաշտոն չլինելու վերաբերյալ» բառերը,

2) հավելված 1-ում լրացնել «Ձև 22»՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ ՊՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետին՝

3-օրյա ժամկետում ապահովել սույն հրամանի հրապարակումը ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայքում:

3. Հրամանը հասցնել ՀՀ ՁՈՒ ԳՇ պետին, ՀՀ պաշտպանության նախարարի և ՁՈՒ ԳՇ պետի տեղակալներին, ՊՆ, ՁՈՒ և ՁՈՒ ԳՇ վարչությունների, առանձին բաժինների և ՊՆ ռազմական համալսարանների պետերին, գորամիավորումների, միավորումների և գորամասերի հրամանատարներին, ՀՀ զինվորական կոմիսարին:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՏՈՆՈՅԱՆ

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

_____ տալիս է եզրակացություն այն մասին, որ

(կադրային մարմնի անվանումը)

_____ -ի

(կոչումը, անունը, հայրանունը, ազգանունը)

զինվորական հաշվառման մասնագիտությանը, ծառայողական գործունեության փորձին, առողջական վիճակին համապատասխան թափուր այլ զինվորական պաշտոն _____ դրությամբ առկա չէ:

(օրը, ամիսը, տարեթիվը)

_____ (կադրային մարմնի ղեկավարի պաշտոնը, ստորագրությունը, ազգանունը)

Կ. Տ.